Հաստատում եմ
Տնօրեն՝ ________________

Ստուգված է՝
Ուսումնական աշխատանքների գծով
տնօրենի տեղակալ՝ ________________

ԳՅՈՒՄՐՈՒ N37 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022– 2023 ուսումնական տարի

Մասնախմբի ղեկավար՝ /Գ.Մարտիրոսյան/

Բնագիտմաթեմատիկական առարկաների մեթոդական միավորման մասնախմբի
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

• Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների դասավանդումը դպրոցում:
• Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:
• Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:
• Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:
• Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ գնահատելով մեթոդական միավորման անդամների կրթական կարիքները:
• ՈՒսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման և ստեղծագործական հաշվետվությունների միջոցով :
• Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:
• Ուսումնասիրել նոր չափորոշչային պահանջները և դնել քննարկման:
• Ապահովել ավագ դպրոցի մասնագիտական հոսքային դասարաններում պրոֆիլային առարկաների դասավանդման բարձր մակարդակը և սովորողների կողմից նշված առարկաների լիարժեք յուրացումը ըստ սահմանված ծրագրային պահանջների:
• Գնահատել հեռավար կրթության մասնակից աշակերտների կրթական կարիքները, աջակցություն տրամադրել, գնահատման մեխանիզմներ մշակել և վերջիններիս հետ հետադարձ կապ ապահովել:
• Հնարավորինս ապահովել սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը: Աշակերտներին նախապատրաստել դպրոցականների միջազգային և առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:
• ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Գյումրու №37 ավագ դպրոց

Մասնախմբի ղեկավար՝ Գ. Մարտիրոսյան

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Կատ. պատասխանատու | Նշում |
|---|---|---|---|---|
| 1 | Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման աշխատանքների պլանավորում և կազմակերպում | 2022թ. օգոստոս, սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |
| 2 | Բնագիտամաթեմատիկական առարկաների մասնախմբի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում | 2022թ. օգոստոս, սեպտեմբեր | Մասնախմբի ղեկավար | |
| 3 | Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում | 2022թ. սեպտեմբեր | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 4 | Հեռավար կրթության մասնակից աշակերտների կրթական կարիքների գնահատում, աջակցության տրամադրում, գնահատման մեխանիզմների մշակում և վերջիններիս հետ հետադարձ կապի ապահովում | Ըստ անհրաժեշտության | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 5 | Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 6 | Ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 7 | Կորոնավիրուսային իրավիճակներում առողջ և անվտանգ աշխատանքային ու կրթական միջավայրի ապահովում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 8 | Ուսումնական կաբինետների կահավորում և հարստացում | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | և անդամներ | |
| 9 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում, այդ թվում հեռավար ուսուցման անհրաժեշտության շրջանակներում ուսուցիչների վերպատրաստում օնլայն հարթակներում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 10 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, ընթերցումներ | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 11 | Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 12 | Սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող դասագրքերի փորձաքննություն(անհրաժեշտության դեպքում) | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 13 | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ներդրման նպատակով կազմակերպել փոխադարձ դասալսումներ | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 14 | Ուսուցիչներին նախապատրաստել հերթական ատեստավորմանը | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 15 | Դասավանդման մեթոդների կատարելագործման, համագործակցային ուսուցման և նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով կազմակերպել բաց դասեր | Երկրորդ կիսամյակի ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 16 | Առարկայական միջոցառումների կազմակերպում և անցկացում | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17 | Համացանցի www.armedu.am, www.aniedu.am, www.esource.armedu.am, www.phet.colorado.edu.sims կայքէջերի, մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում | Ուստարվա ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 18 | Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում | Երկրորդ կիսամյակի ընթացքում | Փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 19 | Կազմակերպել մասնագիտական զեկուցումներ և քննարկումներ | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 20 | Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում | 2022թ. դեկտեմբեր, 2023թ. մայիս | Փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար | |
| 21 | Դպրոցական օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |
| 22 | Աշակերտների նախապատրաստում հանրապետական առարկայական օլիմպիադաներին հաջող մասնակցության | Ուստարվա ընթացքում | Մասնախմբի ղեկավար և անդամներ | |

**Առաջին կիսամյակի ընթացքում ուղղորդված աշխատանքներ ուսուցիչների կողմից**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Զեկույց | հոկտեմբեր | Վ. Վարդանյան | |
| 2 | Գործնական պարապմունք | հոկտեմբեր | Ս. Հովհաննիսյան | |
| 3 | խաղ-վիկտորինա բնագիտական առարկաներից | նոյեմբեր | մ/մ անդամներ | |
| 4 | Լաբորատոր փորձ | դեկտեմբեր | Լ. Մխիթարյան | |
| 5 | Լաբորատոր փորձ | դեկտեմբեր | Թ. Պողոսյան | |
| 6 | Չափորոշչային նվազագույն պահանջների ապահովման ստուգման | դեկտեմբեր | Փոխտնօրեն, մասնախմբի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նպատակով գրավոր աշխատանքի կազմակերպում ինֆորմատիկայից | | ղեկավար և Ս. Հովհաննիսյան | |